զեցին, և անդ զսուրբն տեսեալ հեղինակ, Իսրայէլ անուն՝ անկեալ առ ոտս նորա՝ պատմէր զտեսիլ իւր յանուրջս և մաղթէր յայտնել նմա զիրացն հանգամանս։ Իսկ նա ոչ առնոյր յանձն յայտնել նմա զխորհուրդն, որով զառնայր նա ի տեղի իւր։ Եւ ի վաղիւն առնոյր և երկրորդէր նոյն տեսիլն, ունելով և ձեռագիր նշան, զոր բերեալ առնն Աստուծոյ, որոյ զայն տեսեալ և մտաւորեալ, թէ 'ի վերուստ է ազդեցութիւն. յայտնէր նմա զխորհուրդն, զնոյն ինքն զկենսատու Խաչն ցուցանէր, և երդմնապատիժ սահմանադրութեամբ պատուէր տայր նմա մի ումէք պատմել։

Բայց թէպէտ և բազմազաշն լեալ էր երդմամբ չպատմել ումէք, սակայն յետ սակաւ աւուրց զրժողաբար ուխտազանցեալ երթայր առաջի կաթուղիկոսին և այլոց ամենեցուն հուչակէր զզրոյցն, զի չէր պարտ պարածածկել ճշմարտութեանն, ընդ որ հայրապետն Եղիազար հիանայր վասն պարգևական աւետեացն։ Եւ նոյն ժամայն կամաւ իշխանին Ջիւանշիրի զիր հրամանական առ Իսրայէլ առաքէ փութանակի զչքնաղագիւտ Խաչն Քրիստոսի առ նա հասուցանել։ Իսկ նորա հնազանդեալ Հայրապետական հրամանին՝ փութով հասանէր 'ի սուրբ եկեղեցին և ինքնին մեծ իշխանն՝ և սուրբ Հայրապետն ամենայն մեծամեծօքն անդ հասանէին, և ակն յայտնի զնորոգափայլ Խաչն Քրիստոսի տեսանէին, որ սրբոյ Մաշտոցի իւր իսկ ձեռացն լեալ էր, որով զարձուցանէր զաշխարհս Աղուանից 'ի կուռն մոլորութենէ լուսածնութեամբ աւազանին շնորհաց։ Եւ երկրպագեալք սրբոյ նշանին՝ զառնային յարազուարճ բերկրանօք՝ զտենչալի պարգևաց տուողն բարեբանելով։ Յայնմ հետէ մեծարու եղեալ քահանայն Աստուծոյ Իսրայէլ առաջի կաթուղիկոսին և իշխանին և յաչս մեծամեծացն՝ առնոյր հրաման 'ի նոցանէ գործել զամենայն համարձակապէս, և յետ սուղ ինչ աւուրց վասն առաւել հրաշիցն և մեծամեծ սքանչելեացն, որ բազում անգամ եղեալ էին 'ի վերայ ծառոյն նոճից, կամեցաւ զի 'ի նուէր նշանի ձօնեսցէ զնոսա 'ի պատկեր Ցեառն աննման Խաչին։ Եւ առ ժամայն կոչեցեալ զվարձաւորս արս ճարտարս հիւսանց պատշաճաբար յօրինել տայր զնշան խաչի քանդակակերպ